

ՄԵԼՈՒՆԵՐ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисть, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (լացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցիւզով.

Յայտարարութիւններ համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄԵԼՈՒՆԵՐ

ԼՐԱԳԻՐԸ
1903 թվին

12 ամսական	10 ռուբլի
11 »	»
10 »	9 »
9 »	8 »
8 »	»
7 »	6 »
6 »	»
Մնացածները ամսական	1 »

Եւրոպայում 30 ֆր., Ամերիկայում 6 դոլլար,
Պարսկաստանում 10 ր.
Հասցէն Тифлисть. Редакция «Мшакъ».

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Նոյն հարցի մասին.—ՆԵՐՔԻՆԵՐԻ ՏԵՍԻՍԻՒՆԵՐԻ.
Գրիգոր Արծրունի «Հանդէս Ամսօրեայի» մէջ.
Փոքրիկ նկատողութիւններ. Նամակ Գանձակի
գաւառից. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆԵՐԻ ՏԵՍԻՍԻՒՆԵՐԻ. Նամակ Անգլի-
այից. Արտաքին լուրեր. ՀԵՌԱՆԻՍԻՆԵՐԻ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Հակաթոքախտային արշաւանքը Օդեսայում:

ՆՈՅՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Մեր երէկվայ յօդուածում մենք խօսեցինք այն տեղական պայմաններ մասին, որոնց շնորհիւ բարձրագոյն գիւղատնտեսական դպրոցը ներկայանում է իբրեւ մի անհրաժեշտութիւն մեր երկրի համար:
Ներկայումս կրթված գիւղատնտեսների մեծ պահանջ կայ մեր երկրում: Եթէ հաշուէի առկայէն մի կողմից նրանց, որոնք կարող են իրանց սեփական կալուածների տնտեսութեամբ զբաղվել, միւս կողմից այն անձանց, որոնք իբրեւ ագրոնոմներ, անտառապահներ, ինսպրեկտորներ, գիւղատնտեսական դպրոցների ղեկավարներ եւ վեր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԼՈՒՆԵՐԻ ՕՐԵՆՈՒՄԻՍ
(Շարունակութիւն)

III

Անհրաժեշտ է թոքախտի դէմ մաքառել. իսկ որ այդ հարաւոր է թոք ապացոյց լինի Գերմանիան—բանուորները ապահովագրման գաղափարի հայրենիքը, Կոխի եւ Բրէմէրի ծննդավայրը: Այնտեղ ապահովագրված են բոլոր բանուորները. թոքախտը նրանց հայրենական դարձնելով իրաւունք է տալիս ստանալու թուշակ Ուստի, ապահովագրական ընկերութիւնները հիմնում են իրանց սեփական անաստօրիաները, որոնց մէջ նրանց աւելի ձեռնուող է բժշկել հիւանդացած բանուորներին եւ նրանց կեանքը շնորհել, քան վճարել ահագին պէճմիւններ նրանց մահվան դէպքում: Եւ թողա՛ք հայրենականութեան դէպքում: Գերմանիայում հիմնված են բազմաթիւ անաստօրիաներ, ուր բժշկվում են 22,000 բանուորներ. բժշկվում եւ առողջանում են. այնտեղ բժշկները, միանգամայն նուիրված ժողովրդի պաշտպանութեան կարողացան գործի հրաւիրել ամբողջ հաստատութիւններ. բայց զլխաւոր եւ ամենագործնական աշողութիւնը ձեռք բերվեց այն ժամանակ միայն, երբ նրանք հիմք առան Գերմանիայում գոյութիւն ունեցող 25 միլիոն բանուորների պարտադիր ապահովագրութիւնը: Այսպիսով ներկայումս սահմանվում են երեք հիմնական կէտեր թոքախտի մասին.—նրա վարակիչ լինելը, նրա առաջն առնելու հարաւորութիւնը եւ նրա բուժելիութիւնը: Այդ գիտութիւնից հետեւում է ինչպէս անձնական, այնպէս էլ հասարակական առողջապահութեան անցիկ—օգուտը երևան կը գայ շուտով: Ձը

ընդհանրական կերպով հմուտ ղեկավարներ գիւղատնտեսական մի քանի ձեւերում: Իայց այդ ուրոյն ուրոյն ձեւեր բերված կատարելութիւնները չեն ամբարկած մի տեղ, մի այնպիսի հաստատութեան մէջ, որ ներանց ժողովրդի, սխտեմի վերածէր եւ ապա աւանդելով նոր սերնդին՝ զարմէր հանրային սեփականութիւն:

Այդ գերն էլ կը կատարէ բարձրագոյն դպրոցը, որի կարեւորութիւնը օրէցօր աւելի եւ աւելի զգալի է դառնում:

ՆԵՐՔԻՆԵՐԻ ՏԵՍԻՍԻՒՆԵՐԻ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ» ՄԵՋ

Վերանայի «Հանդէս Ամսօրեայ» ամսագրի այս տարվայ առաջին համարից սկսեց տպագրվել «Գրիգոր Արծրունի» (անձնական լիցիւզութիւններ) պ. Կ. Տիւրեանի Առաջին համարում, ուր տպագրված է Արծրունու պատկերը, նկարագրված է Արծրունու թաղման հանդէսը, երկրորդ համարում պ. Տիւրեանու պատմում է թէ ինչպէս ինքը ծանօթացաւ Արծրունու հետ եւ սկսեց աշխատակցել «Մշակ»ին:

Պարոնը այդտեղ բերում է եւ Արծրունու մի շատ գեղեցիկ նամակը Ահա ինչ էր գրում «Մշակ»ին հանդուգեալ հիմնադիրը պ. Տիւրեանին.

«Ես շատ ուրախ եմ լինում, երբ մեր այլադասան հայերը, կաթօլիկները եւ բողոքականները, մասնակցում են իմ լրագրին: Հայոց ազգը միմիայն հայ-լուսաւորչականներին չէ պատկանում, այլ ամբողջ ազգութեանը: Իմ նպատակն էր միշտ դարձնել «Մշակ»ը ընդհանուր ազգային թերթ: Ես միշտ ուրախ կը լինեմ ձեր յօդուածները ստանալ թէ որպէս հայի, թէ որպէս կաթօլիկ հայի եւ թէ վերջապէս որպէս հայրենի լաւ խմացող գրողի: Ես ինչու եւ ոչինչ ֆանատիկութեան չեմ կարող ունենալ: Ես եմ ինչ համար յարգելի է, ամեն համոզմունք եւ յարգում եմ եւ ծաղկում եւ հայ-լուսաւորչական, հայրենի սովորել եմ

հայ-կաթօլիկ Միլիթարիանների մաս, իսկ իմ համալսարանական բարձրագոյն ուսումը ստացել եմ բողոքական Գերմանիայում: Բայց դարձեալ հայ եմ մնացել եւ միշտ կը մնամ, յարգելով ամեն կրօն Այդպիսով կաթօլիկ, լուսաւորչական, աւետարանական եւ մահմադական հայերը կարող են միմեանցից շատ բան սովորել, միմեանց օգնել եւ ձգտել միասին մի ընդհանուր նպատակի,—ազգային բարոյական վերանորոգութեան:

Պ. Տիւրեանի յօդուածները շատ գեղեցիկ են գրված եւ կարգադրվում են մեծ հետաքրքրութեամբ:

ՓՈԳՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Հաւաքարի ժողովրդական թատրոնում եւնք: Վերջապէս իրագործված ենք տեսնում անթիւ անգամ կրկնված ցանկութիւնը՝ բուն ժողովրդի մէջ ժողովրդական թատրոն ունենալու մասին:

Խաղում էին այդ օրը, յունվարի 28-ին, «Ասլան-Բալասան».—թուրք ութերորդ ներկայացումը ներկայ սեզոնում: Մեզ համար շատ հետաքրքրական էր տեսնել ժողովրդի վերաբերմունքը դէպի այդ նոր սկզբած գեղեցիկ գործը: Թատրոնը գտնվում է Հաւաքար քաղաքամասի հեռու ծայրում եւ չը նայած այդ օրվայ սաստիկ քամուն՝ որովհետեւ ժամանակին շարան շարան տղամարդկանց եւ կանանց խմբեր դիմում էին դէպի թատրոն. իսկ երբ մօտեցանք թատրոնին՝ այնտեղից նկատվում էր հակառակ հոսանք տրտնայնորով... Ինչպէս, ինչ էր պատճառը... տոմսակ չը կայ:

Թատրոնի առջև կատարելաւ իրաւացում էր, եւ միայն ոստիկանի օգնութեամբ կարելի էր ձանապարհ բանալ ներս մտնելու: Ես տեսնեմ, հարիւրաւոր բերաններ աղբւրսում են տոմսակ, աղբւրսում են ինչպէս ծարաւը ջուր, սակայն իզոյր.—իսմ չէի կարող կարգադրողները ժողովրդին միմեանց զլխին նստեցնել:

Վերջապէս, մի կերպ աղոյղում է մեզ ներս մտնել: Դանիւրը լցված է ժողովրդով: Ամենքը գոհ են, դէմքերի արտայայտութիւնը կա-

ղով եւ հիմնել անաստօրիաներ ու ամառնային կօթի խանութ:

Ներկայ դասախօսութիւնը մի նախապատրաստական բացատրութիւն է այն ինչնորինակ հակաթոքախտային ցուցահանդէսի, որը բացվեց երէկ, յունվարի 15-ին, Վենիսի դահլիճում: Այդ մասին դալ անգամ:

Յունվարի 15-ին Վենիսի դահլիճում բացվեց «Հակաթոքախտային ցուցահանդէսը», որ իր տեսակի մէջ առաջին օրինակն է Ռուսաստանում:

Ցուցահանդէսը պարզ կերպով ներկայացնում է թոքախտի դէմ մղված հասարակական կոնքրետ արեւմտեղութիւն թիցը եւ դրված բազմաթիւ կօլէկցիաներ, աղիւսակներ, քարտէսներ, նկարներ եւ այլն:

Ցուցահանդէսը ոչ միայն մասնագէտներին, այլ եւ ամենքի համար մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում. բացատրութիւնները տալիս է նրա կազմակերպող ղոկտօր Բիւլմանտալ մի քանի բժիշկ-մասնագէտներին եւ ուսանողներին օգնութեամբ:

Դէպի զլխաւոր դահլիճը տանող անցքերի պատերը զարդարում են ցուցահանդէսի, որոնց վրա վերջօրինաց տուներով տպագրված են զանազան հակաթոքախտային խորհուրդներ: Հետաքրքրական է նրանց բովանդակութիւնը. «Թոքախտը բուժելի է», «Թոքախտը վարակիչ է», «Թոքախտը, եթէ նրա վրա կարեւոր ուշադրութիւն չը դարձնվի՝ սաստիկ վարակիչ է», «Թոքախտը միանգամայն անվտանգ է եթէ լուրջ եւ ուշադիր վերաբերվեք դէպի նրան», մի արդէ սենեակները չոր աւելներով, «բժշկելով թոքախտաւորին, դուք դրանով կը փրկեք ձեր անձը եւ ձեր շրջապատողներին հիւանդանալու վտանգից», «Դի թրէք ոչ յատակի վրա եւ ոչ էլ թնայնականում», «մեր միջնակարգ դպրոցներում բարակացաւ ընդամենը բաղմա-

(Կը շարունակւի)

նրանց վիճակի մասին նուրբում է իւրա-
քանիւրքին մի-երկու րօպէ, տալիս մի քանի
բանալ խորհուրդներ ու դուրս գնում Տողերիս
գրողը անձամբ հարց ու փորձ է արել նրա
այցելած հիւանդներին ու ստուգել, որ պ-
թիւնը ոչ մէկի չէ մօտեցել, չէ գննել երակը
դոնէ, չէ չափել տաքութիւնը, մատի ծայրով
անգամ չէ բարեհաճել զիպչել հեւացող, տանջ-
վող հիւանդին վախենալով վարակելուց:
Երբ Բանանցում այդպէս կատարել, վերջացրել
է իր միասին, նրան խնդրել են այցելել մօտա-
կայ գիւղերը, նա մերժել է. նրան աղերսել են
այցելել գոնէ հարեան Քարնան ու Չովդարը,
որտեղ տիֆը ամենից շատ է տարածված ու
շատ զոհեր է տարել ու տանում. նա անպայ-
ման մերժել է այդ աղերսները ևս, ասելով,
որ իրան վարչութեան կողմից հրտապրված է
այցելել միմիայն Բանանց գիւղը, որ իր ստա-
ցած առաջադրութեան մէջ այն գիւղերի ա-
նունները չը կան... Աւելորդ է ասել, որ եթէ
պ. Չուրաբովը մի-երկու օր աւել լինար գիւ-
ղերում, այցելէր խղճով Չովդարն ու Քար-
նանը, իր վարչութիւնից ոչ թէ յանդիմանու-
թիւն, այլ չնորսակալութիւն կը ստանար: Մենք
համոզված ենք, որ մի Սակսիմ Գօրկի մի
րօպէ անգամ չի տատանվի համայն մարդկու-
թեան համար խիստ թանգազին իր կեանքը
վտանգի ենթարկել այնտեղ, որտեղ այդ հար-
կաւոր է, բնաւ ուշ չը դարձնելով այն բանի
վրա, որ իր մահը մեծ աղէտ կը լինի, ինչպէս
էր Ջօլայինը, իսկ մի խոշորագոյնային մեծու-
թիւն, որի կեանքը, ինչպէս և շատ ու շատ
նրա նմաններին, մեծ գին ունի միմիայն օժի-
տաւոր հարմարացումների համար, զոգրելով վախ-
կոտութեամբ խուսափում է իր ոչ միայն բա-
րոյական, այլ և պաշտօնական պարտքը
կատարելուց, որի համար նա ռոճիկ է ստա-
նում ու որը, համալսարանն աւարտելիս ու
յետոյ պետական ծառայութեան մէջ մտնելիս,
եւրօվ է և սրբութեամբ կատարել...
1900 թ. Ռուսաստանի ներքին նախնադեմ-
բից մի քանիստ տիֆը սաստիկ տարածված
էր: Աղէտի տեղն էին գնում շատ ուսու բժիշկ-
ներ և ուսանողներ: Նրանց հետ միասին Պե-
տերբուրգից գնում է նոյն վարակված չլմանը
գիւղացի տիֆաւոր հիւանդներին խնամելու
համար, իբրեւ, այսպէս ասած, գթութեան եղ-
բայր, լէլը-գիւղացի ուղանեան գնդի մի
օֆիցեր, որը, մոռացութեան տալով Պետեր-
բուրգի փայլուն սպանները, մի քանի ամիս
չարունակ անձնուրաց կերպով ծառայում է
ժողովրդին, գիւղացու անչուք խրճիթում
խնամում է նրա հիւանդներին ու վերջը վա-
րակվում է տիֆով ու մեռնում: Նրա կենսա-
գրութիւնը ու պատկերը կան «Նիկոլայ» 1900
թէ 1901 թ. համարներից միմեան Տարաբախ-
տաբար հերոս օֆիցերի անունն-ազգանունը
չէր յիշում: Այդ պատանի է ուսուց կենա-
քում, ուսու իրականութեան մէջ, իսկ հայ իրա-
կանութեան մէջ պատանւում է այն, ինչ որ
նկարագրած է վերեւում, մի տեղ տեսնում ենք
կատարեալ անձնութեանը, որտեղ կատարեալ
կույր ալտուրիզմ, միւս տեղ կատարեալ
անձնապաշտութեան, էգզիզմ...
Եթէ մեր կաշուեպաշտ ինտելիգենտները
գլխադիական օֆիցերներին դիմել մարդիկ լի-
նեն, նրանք այնքան կը բարձրացնեն իրանց
քիթը, որ բնաւ լայնը չեն անի, չեն համա-
ձայնվի, մեղ պէս հասարակ մահկանացուներին,
մեղ պէս գոհնիկ մեծիկներին հետ մի միջո-
ւորումով աղբի, մի տեսակ օդ չնչի ու ան-
շուշտ տիեզերք խորքերում գտնվող որ և է
հեռաւոր մոլորակից իրանց համար առանձին
չնչելու օդ բերել կը տան...

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳՈՒԹԵԱՆ

Ախալցխա, յունվարի 24-ին
Բերլինի հայ ուսանողութեան ձեռնարկու-
թեամբ կազմակերպ հայկական ցուցահանդէսին
մենք, արծաթագործ արհեստաւորներ, կա-
մուրում ենք մասնակցել: «Մշակի» տուած տե-
ղեկութեան համեմատ զարկվելիք իրերը կրն-
գոնովին նուրբ: Այսպիսի դէպքում մենք
ստիպված կը լինենք թիթի արժողութիւն ու-
նեցող չէնքեր ուղարկել, որովհետեւ մեզանից
մեծ մէկը ապահովված մարդ չէ: Եթէ հարա-
ւորութիւն լինէր զրկածներս նորից յետ ստա-
նար, ան ժամանակ աւելի աչքի ընկնող չէն-
քեր կը լինենք: Այս մասին ցանկալի է որքան
կարելի է շուտ տեղեկութիւն ստանալ:

Արծաթագործ Կ. Ս. Գրիգորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի այգեգործական դպրոցի աշակերտ-

ներին ամառվայ գործնական պարապմունքներ
տալու նպատակով դիտաւորութեան կայ ա-
մանները խուճ-խուճ տեղափոխել նրանց
իշխան Էրիսթովի կալուածքը, Կասպի երկա-
թուղային կայարանի մօտ: Այդ կալուածքում
մօտ 20 դեռեւտիս տեղ կը յատկացնէր զըպ-
րոցի նպատակների համար: Այդ հողի վրա կը
մշակվին այգեգործական և բանջարանոցային
բոյսեր: Կալուածքը կապարով կը վերցնէին
տանկերու տարով:

Ֆինանսների մինիստրութիւնը թոյլ է տուել
Պետերբուրգի միջազգային առևտրական բանկի
վարչութեան՝ այդ բանկի բաժնատուներ բանալ
Բաթումում:

Թիֆլիսի աւստրո-ունգարական հիւպատոս է
նշանակված Հէկտօր Դի-Բօզի, որ արդէն հա-
սել է Թիֆլիս և ստանձնել իր պաշտօնը:

Երեքշաբթի, յունվարի 28-ին, Թիֆլիսի Ա. Բ-
տիստական ընկերութեան դահլիճում տեղի ու-
նեցաւ ջութակահար Վասիլիսի և օր. Օ. Քա-
լանթարեանի կոնցերտը: Վասիլիսը, որ վա-
ղուց յայտնի է թիֆլիսցիներին իր նուագնե-
րով, այս անգամ հանդէս եկաւ աւելի ևս մեծ
աջողութեամբ և ստացաւ բուռն ծափահարու-
թիւններ: Օր. Քալանթարեանը, որ նոր է ա-
ւարտել իր ուսումը Պետերբուրգի կոնսերվա-
տօրիստում, ցոյց տուեց երաժշտական ճաշկ-
ն մշակված տեխնիկա: Թէ մեզմ նուագաւորու-
թեան և թէ բուռն դաշնակահարութեան մէջ
նա ամուր և ճիշդ ձևեր ունի: Տեղ տեղ խաղի
վստահ գիծը թուլանում էր՝ բայց ընդհանրա-
պէս նա գեղեցիկ էր և չնորհալի:

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստ-
րութիւնը թոյլ է տուել Անդրկովկասին եր-
կաթուղիների վարչութեան 1/5 կօպէկ տուրը
վերցնել այն ընտանիք իւրաքանչիւր պուզից,
որոնք ներմուծվում են Ալեքսանդրօպօլ-Երևան
և Բորժօմ-Բակուերի միջով կայարանները:

«ВОЛНЬ» լրագրում կարդում ենք. «Պ. Ասի-
լանի բենեֆիսին ներկայացվեց «Դէմօն» օպե-
րան: Չը նայելով, որ այդ պիեսը երբորդ ան-
գամ է արվում Ժիւսօմիթում ներկայ սեզօնի
ընթացքում, այնուամենայնիւ թատրոնը լիքն
էր. և սա զարմանալի չէ, եթէ ուշադրութեան
անհնար պիտի հանգամանքը, որ Ժիւսօմիթից
սիրում են այդ օպերան և գնահատում են պ.
Ասիլանի համակերպի տաղանդը: Բենեֆիցիան-
տին հասարակութիւնը ողջունեց բուռն և եր-
կարատե ծափահարութիւններով: Ապա, առա-
ջին գործողութեան վերջնալուրջ յետոյ, հա-
մարակութիւնը իր սիրելի արտիստին մատու-
ցեց ծաղիկներից հիւսած մի քնար միայն...
Չարմանալ այս բանին պէտք չէ. օպերային
երգեցողութեան սիրողները և գնահատողները
մեզանում կարգված են երկու տեսակ մարդ-
կանից. մի մասը ժլատ է, որովհետեւ չքաւոր
է, իսկ միւս մասը հարուստ է, որովհետեւ
ժլատ է: Օպերան ներկայացվեց լիւրժի աջո-
ղութեամբ: Մի լար, իմ զաւակ՝ արիւն քե-
նեֆիցիանտը, հասարակութեան հարկադրական
պահանջով, կրկնեց երեք անգամ «Դէմօն» ամ-
բողջ տիպը պ. Ասիլանի տարաւ տաղանդաւոր
կերպով, փայտալիւծ հասարակութեան լսելիքը
երբեմն ուժեղ և երբեմն մեղմ ու խնդրեց եր-
գեցողութեամբ...
Առաջիկայ փետրվար ամսի 19-ին լրանում
է Կովկասում նոր դատարաններ բանալու
35-ամեակը: Ինչպէս լսել է «НОВО ОБОЗРѢ-
НІЕ» լրագիրը, կովկասեան դատաւարական
իշխանութեան ներկայացուցիչներին մէջ միտք
է ծագել հանդիսաւոր կերպով ածելու այդ
յօբեկանքը:

Թիֆլիսի նախագահատը դադարեցրել է այն
որոշման գործադրութիւնը, որ Թիֆլիսի դու-
ման կայացրել էր յունվարի 20-ի նիստում
քաղաքային ուսումնարանական կոմիտէտը կա-
տարողական մասնաժողովի վերածելու հարցի
մասին:

Ռուս նշանաւոր վկագործ Մ. Գօրկիի «Յա-
տակում» պիեսը, որի առաջին ներկայացումը
էր ամբողջ հանգի մայրաքաղաքի գրական
չրջաններում, թոյլ է տուած ներկայացնելու
Պետերբուրգի կայսերական թատրոններում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԱՆԳԼՍՏԻՑ

Լօնդոն, 17/30 յունվարի

Ներկայումս Լօնդոնում է գտնվում Աւետիս

Քարանթար, որ եկել է Պետերբուրգից, իբրեւ
երկրագործութեան մինիստրութեան ներկայա-
ցուցիչ, պարզեւում այն հարցերը, որոնք կապ-
ված են Ռուսաստանից այստեղ բերվող իւղի
վաճառահանութեան հետ: Նա ներկայացրեց
պարլամենտական յանձնաժողովին (Butter Re-
gulations Comitee) իր կարծիքները և այն հե-
տադրութիւնները, որ արել է ինքը քիմիկոս-
ների հետ միասին Ռուսաստանում:

Պէտք է նկատել, որ Անդրկովկասում վաղուց
հսկողութիւն կայ հաստատված վաճառանոց
բերվող ուտեղիկների վրա: Եթէ մի մթերք
կեղծված է կամ համապատասխան չէ որոշ
նորմային, նա չէ ընդունվում և որոշ դէպքե-
րում նոյն իսկ նրա ներկայացնողը ենթարկ-
վում է պատասխանատուութեան: Անդրկովկասում
ընդունված նորմաները անպատասխան ուսուց
իւղերի համար և այդ պատճառով Լօնդոն տա-
րած անարատ իւղ նկատվում է իբրեւ անբա-
ւարար երկու տարի առաջ Ռուսաստանի իւ-
ղերը նոյն իսկ կասկածի ենթարկվելին իբրեւ
կեղծված նիւթեր: Գործը հասաւ դատարանի
Այն ժամանակ էլ Քարանթար եկած էր Լօնդոն
յատկապէս այդ գործի համար և կարողացաւ
գատաւարական ասեանում ապացուցել, որ
իւղերը կեղծված չեն, այլ ունեն ուրիշ բաղա-
դրութիւն, քան անդրկովկասի իւղերը:

Հարց ծագեց, թէ Անդրկովկասում ընդունված
նորմաները որքան ուղիղ են և արդեօք պէտք
չէ նրանց ենթարկել բարեխօսութեան: Այժմ
պարլամենտում յատուկ յանձնաժողովը զգա-
ված է ժողոված նորմաների նիւթերի քննու-
թեամբ: Ռուսաստանից բերված նիւթերը շատ
հարուստ են և համեմատաբար աւելի մեծ
թելով, քան ուրիշ երկրներից: Բայց թէ
ինչ ելք կարող են ունենալ յանձնաժո-
ղովի պարապմունքները Ռուսաստանի նկատ-
մամբ—դեռ դժուար կարելի է ասել: Անդրկա-
սցիները ցանկանում են ուտեղիկների վերաբե-
րութեամբ պահանջող լինել և այնպիսի նոր-
մաներ հաստատել, որոնք աւելի մեծ ապա-
հովութիւն ներկայացնէին կեղծութեան դէմ:
Միւս կողմից նրանք ամեն ջանք գործ են դը-
նում զարգացնելու իրանց կօծիմաններից բե-
րվող մթերքների ներմուծումը դէպի Անդրկա-
ս: Ռուսաստանի ներկայացուցիչը արդէն արել
է իր զեկուցումը կոմիտէտում և այս օրերս
կը մեկնէ Պետերբուրգ:

Ն. Վ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մակեդոնական բարձրագոյն կօմիտէտը
գիմեց մակեդոնական բոլոր հասարակութիւննե-
րին հետեւալ չրջաբերականով. «Շուտով կը
համենն շատ նշանաւոր և հանդիսաւոր օրեր
մեր աշխտութեան գործի, մեր կաշակեր-
պութեան համար: Մեր եղբայրները Բիւլեան
լեռների այն կողմ, որոնք անցեալ աշնանը
ապստամբվեցին դէմը ձեռքին և յայտարարե-
ցին զազատութիւն կամ մահ», հաստատ և
անյողդող զձեռք են շարունակել կռիւր եկող
զարնանը և ընդարձակել նրան: Մեզ մօտ ե-
ղած տեղեկութիւնների համեմատ, զազատու-
թիւն կամ մահ՝ սրբազան խօսքերը կը լսվեն
զարնանը մակեդոնական բոլոր լեռներում և
նովիտներում, վերջին տասնեկուսորդ ժամը
շուտով կը հասնի և վայ նրան, ուլ այդ մեծ
և ճակատագրական ժամին անպատասխան
լինի: Մեզ վրա, մեր կազմակերպութեան վրա
մեծ յոյսեր են դրված. դէպի մեզ են ուղղված
մեր միջոնաւոր եղբայրների հայեացքները
Թիւրքիայում, դէպի մեզ են օգնութեան ձեռք
կարկառում մակեդոնական մարտադիրները: Ի
նկատի ունենալով այդ ամենը և այն, որ նա-
խապատարաւորական աշխատանքների համար
ժամանակ մնում է ընդամենը մէկ երկու ա-
միս, կօմիտէտը յոյս ունի, որ զուգ կը կարո-
ղաւք գնահատել մեզ համար այդքան կարճ
և թանգ ժամանակը և կը գործադրէք նրան
միջոցներ ժողովելու անընդատ աշխատանքի
վրա: Միմիայն միջոցների և ոչ ուրիշ բանի
կարիք ունի ներկայումս մեր կազմակերպու-
թիւնը: Իր միտքան աջողութեամբ իրագոր-
ծելու համար Ահա թէ ինչու համար մակե-
դոնա-աղբիւսօպօրական կօմիտէտը դիմում է
բոլոր մակեդոնական հասարակութիւններին և
հրաւիրում է նրանց միաբան և եռանդով գործելու:

Կ. Պօլսից գրում են «Independance Rou-
maine» լրագիրն, որ Մակեդոնիայի վերաբե-
րմամբ մեծ պետութիւնների գեապանների կող-
մից արած առաջադրութիւնների մասին մինչև
վերջին ժամանակները տարբեր լուրեր էին
պտտում, սակայն այժմ ճիշդ յայտնի է, որ
Ռուսաստանի և Աւստրո-Ունգարիայի ներկա-
յացուցիչները յայտարարում արված են որոշ
պարզ եռանդուն և կատարելապէս համաձայն
ցուցմունքներ «Մակեդոնիայի հաստատուն խա-
ղազգաման» միջոցների մասին: Միասնաբար
ներկայացուցիչը նոյն կարծիքը յայտարարեց Մեծ
Բրիտանիան այն միտքը յայտնեց, թէ ընթաց-
ման պէտք է մտցնել Թիւրքիայի ուրիշ չրջա-
ներում ևս, իսկ գերմանական դեսպան բարոն
Մարալ ֆօն-Բրեքերտէյն թէ յայտարարում և

թէ սուլթանի մօտ ունկնդրութեան ժամանակ
այնպէս սիրալիւր և հանգստացուցիչ եղանակով
էր խօսում, որ մինչև անգամ խուսափեց «Էթ-
ֆօրմ» բառը գործածելուց:

Սուլթանի հրամանով արգելված է պաշ-
տօնեաներ նշանակել յոյներից արտաքին յա-
րաբերութիւնների համար: Ռուսիայի վրա-
յեթներում, որպէս զի դրա հիման վրա նոյն
պաշտօնների համար բոլորները կամ սերբեր
չը նշանակվեն: Նշանակված են երեք թուրք և
մէկ հայ:

Սօֆիայից հեռագրում են «Agence Rou-
maine» լրագիրն, որ մակեդոնական կօմիտէտի
նախագահ Միխայիլովի բանակցութիւններ է
վարում Սօֆիայի ազգային բանկի հետ 150,000
ֆրանկի փոխառութեան մասին բոլորական
100 առևտրականների երաշխաւորութեամբ:

Յունվարի 30-ին (17) գերմանական պար-
լամենտում լեւ Դէմօնիկի հարցապնդում ա-
րեց կառավարութեան ապօրէն վերաբերմունքի
մասին դէպի լեւ ազգաբնակչութիւնը: Լեւ ծա-
ցում ունեցող արգիւնաբերողները և առևտրա-
կանները բոլորեցին ենթարկվում գնաւորա-
կան վարչութեան կողմից, լեւերից խլում են
տարեկան ծառայութեան իրաւունքը զօրքե-
րում, վերջապէս լեւ խմբագիրների հետ վար-
վում են, որպէս յանցաւորների հետ: Պետա-
կան քարտուղար Պօստօյսկի յայտնեց, որ
պրոեսական կառավարութիւնը չէ ընդունում
իր երկրում լեւական հարց միջազգային մրտ-
րով և չի թոյլ տայ պարլամենտին միջամտել
զուտ պրոեսական գործերում: Վերջինների հա-
մար կայ պրոեսական լանդտագ: Ջինոքական
մինիստր Գօլլէր բացատրեց, որ լեւերի ընդ-
հանուր բոլորտ գոյութիւն չունի, որ տարե-
կան ծառայութեան իրաւունքը խլում է այն
երիտասարդներից (գիմնազիստներից Տօրնում),
որոնք մասնակցել են լեւական զազանի ընկե-
րութիւններին: Դրանով և ամեն բան վերջա-
ցաւ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԻՒՆԻՑ

28 յունվարի

ՍՈՒՆՈՒՄ, Դուռնա ընտրեց Պրինց Ալեք-
սանդը Պետրովի Օլէքսանդրովնա Սուխոմի
պատուաւոր քաղաքացի:

ՄԻՏԱՎԱ, Ժողովրդական լուսաւորութեան
մինիստրութիւնը, ֆինանսների մինիստրու-
թեան յարուցած այն հարցի առթիւ, թէ բա-
ւարական ժողովարութեան հոգաբարձութիւննե-
րը դժուարանում են համար իրանց նպատակ-
ներին առանց ժողովրդական ընթերցանու-
թիւնների լատիւրէն և էստերէն լեզուներով,
համաձայնութիւն տուեց այդպիսի ընթերցա-
նութիւնների կազմել միայն այն պայմանով,
որ ընթերցանութիւններ լինեն և ուսուցեն լե-
զուով:

ՄՈՒՂԻԱ, Առաւօտեան երկու վայրկեանների
ընթացքում զգացվում էր զօրեղ ստորերկրեայ
հարուած:

ԼԻՈՎ, Կուտի մէջ այրվեցին յունվարի
26-ին 370 մասնաւոր տներ և մի քանի հասա-
րակական շինութիւններ: 500 ընտանիքներ
մնացին առանց ապաստանի և կերակրի:

ՀՈՒՄ, Թագաւորը յանձնեց ժողովին մի-
նիստրին արտաքին գործերի մինիստրութեան
ժամանակաւոր կառավարութիւնը:

Կ. ՊՈՒՄ, Կ. Պօլսի գործակալութիւնը
յայտնում է, որ թիւրքաց զօրքերի դէմքի
կանչվելու լուրը անհիմն է:

ՄԷԼԻՎԱ, Կարիւնեան Բէնիսիկար ցեղը ձա-
նալեց սուլթանի գերիշխանութիւնը:

Կ. ՊՈՒՄ, Հնարովի են «Figaro» լրագրի
հրատարակած տեղեկութիւնները թիւրքական
զօրքերը դէմքի կողմը մասին: Սերբէս տե-
ղում զգացվում է հեծեալզօրքի պակասութիւն
և կազմակերպվում են երկու հեծեալզօրքեր,
սակայն դէմքի չէ կանչված ոչ մի զօրամաս:

ԲԱՌՈՒՄ, Մանիպաւանի գործարանի հրդե-
հից վնասները 800,000 ռուբլուց աւելի են
Գործարանը վերանորոգելու աշխատանքները
կատարվում են և այս օրերս նա կը սկսէ աշ-
խատել: Գործարանը ապահովված է «Россиа»
և «С.-Петербургское» ընկերութիւնների մէջ:
Փայտեղէն, ապահովաւորված է արժողութեան
քառորդ գնով:

29 յունվարի

Կ. ՊՈՒՄ, Հարց պատրիարքի վրա բկվո-
վէր արձակողը և նրա փախած գործակիցը
զատապարտված են մահվան պատժի. երեքը
զատապարտված են զանազան պատիժների,
նրանցից երկուսը ցմահ բանտարկութեան: Մե-
ղադրողները յայտնեցին, որ դիտաւորութիւն
ունէին սպանալիքներով փող կորցրել նշանա-
ւոր հայերից և առում են, որ իրանք ոչինչ
յարաբերութիւն չունեն հայկական կօմիտէտի
հետ:

ԿԻԵՎ, Շաքարագործարանաւորների համա-
ռուսական ընկերութեան վարչութեան մէջ,

